

Թագաւորը նոյն սուրբ տեղւոյն վրայ եկեղեցի մը կառուցանէ, որպէս զի ազատի վտանգէն: Նոյն հեղինակները կը յարեն թէ այս գրոյցը յայտնող գրեթէ աննշան որմանկար մը կը տեսնուի նոյն եկեղեցիին կողակին մէջ:

Այս աւանդութեանէն զատ կայ նաև Անաստաս վրդ.ին յիշատակութիւնը որ է հետեւեալը. Այլ վսևն Սահսունեսց, ուր հսւսաւորին բնակիև ի կողմն Սիռնի. վասն զի այս վանքին մէջ շատ անգամներ բնակած են հաւատաւոր կիներ, որ են մայրապետք. բայց յիշատակարանները ցոյց կու տան միւս կողմէն թէ վանականներ ևս բնակած են հոն պարբերաբար: Կը թուի թէ հին դարերուն՝ կոյսեր կը բնակէին այս վանքին մէջ. բայց ԺԴ. դարու մեր ձեռագրական յիշատակարաններէն, ինչպէս նաև 1479 և 1483 ին Դոմինիկեան Ֆէլիքս Ֆապրիի Ուղեգրութեան կ'իմանանք որ վանականներու բնակութիւնը կը շարունակուէր, և երկու հարիւր տարի վերջը միայն մայրապետներ կը հաստատուին հոն: Պէտք է զիտել նաև Հրեշտակապետի եկեղեցիին տեղագրական պայմանները. ան շրջապատուած էր հայկական-սրբավայրերով, իր զիմաց և կողմնակի ունէր Ս. Ստեփանոսի և Ուրկանոցի վանքերը, որոնց միոյն աւերակը այժմ գոյութիւն ունի, միւսինը՝ ճանապարհին միացած. քիչ մը հեռուն կը գտնուի Հայոց Ս. Փրկչի վսևն և թերևս ուրիշներ ալ: Սիռնի մայր եկեղեցիին մօտիկ, այս եկեղեցիները ի հնումն կը կազմէին հայկական եկեղեցիներու խումբ մը Սիռնի թաղին մէջ. այս պարագային մէջ Հրեշտակապետի վանքին անոնց խիստ մերձաւորութիւնը կ'ապացուցանէ հայկական ծագումին պարագան:

## 5. Ս. Հրեշտակապետի եկեղեցին.

Ս. Հրեշտակապետի վանքի եկեղեցին այլևայլ չէնքերու մէջ կառուցուած գեղեցիկ և սիրուն չէնք մըն է. արդի չէնքը տարակոյս չկայ որ քանդուած և կամ հնութեանէ փլցուած չէնքին տեղ շինուած է. հարաւային կողմնակի դուռնէ մը ներս կը մըտնենք եկեղեցիին գաւիթը, որ ընդարձակ տարածութիւն մը ունի, 51 ոտք երկայնութիւն և 17 ոտք լայնութիւն. գաւիթը կցուած չէ բուն չէնքին, վերջէն շինուած կ'երևի, և ճարտարապետական ձևով բոլորովին կը տարբերի: Ունի Չարչարանաց